«ԽորանԱրդ» ինտելեկտուալ կենտրոն
«KhoranArd» Intellectual Center

# Ե 05 / 24

12 մարտի, 2024թ.

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ»
Քարտուղարության բաժին
ՍՏԱՑՎԱԾ Է 12.03 2024
ԳՐԱՆՑՎԱԾ Է N 4801

Վարդգես Սամսոնյան,
Գյումրու համայնքապետ,
ք.Գյումրի, Վանդանանց 1

ՀՀ 3103 Շիրակի մարզ,
ք.Գյումրի, Մ.Մկրտչյան 38ա/1

ՀԿ նախագահ՝
Ս. Մարտիրոսյան

Ap.1 bld. 38a, M.Mkrtchyan,
Gyumri, Shirak marz, RA 3103

NGO Chairman:
S.Martirosyan

Tel. /+374 312/ 569 17
098 434256
091 434256

E-mail:
seyranmartirosyan@gmail.com

ՀՎՀՀ 05528262
h/h 1150002007470100
«ԱՄԻՕբանկ» ՓԲԸ, Գյումրու
մասնաճյուղ

Հարգելի պարոն Սամսոնյան,

«Խորան Արդ» ինտելեկտուալ կենտրոնն արդեն 25-րդ անգամ (հնագույն մրցաշարը Հայաստանում) անցկացնելու է Համահայկական ինտելեկտուալ փառատոն, որին մասնակցելու են Երևանի, Գյումրու և Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերից գիտակների 25-30 թիմեր:

Համահայկական հոբելյանական փառատոնը կայանա 2024թ. դեկտեմբերի 21-22-ին (անցկացման վայրի մասին կհայտնենք լրացուցիչ): Երկօրյա փառատոնի ծրագրում ընդգրկված են «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ», «Բրեյն Ռինգ», «Սեփական սաղ» և այլ ինտելեկտուալ թիմային ու անհատական խաղեր, այդ թվում նաև «ԽորանԱրդ» կենտրոնի հեղինակային խաղերը: Խաղերի անցկացման հարցային փաթեթները պաշտպանված են հեղինակային իրավունքով:

Համահայկական փառատոնը շահեկանորեն տարբերվում է այս ոլորտի միջոցառումներից նրանով, որ հարցային փաթեթները բացառապես հայերենով են, խրախուսվում են հայկական և Գյումրու վերաբերյալ հարցերը: Փառատոնը, բացի խաղային մրցաշարերից, ունի մշակութային ծրագիր:

Համահայկական փառատոնը լիարժեք կազմակերպելու և անցկացնելու համար ակնկալում ենք Գյումրու քաղաքապետարանի շահագրգիռ աջակցությունը փառատոնի մասնակիցների մրցանակների, գիշերակացի, սննդի կազմակերպման, ներքաղաքային տեղափոխման կազմակերպման և այլ հարցերում:

Խրախուսվում է աջակցության և հովանավորության ցանկացած ձև՝ ֆինանսական, նյութական, տեղեկատվական, մրցանակային: Պատրաստ ենք առկա հանդիպման ընթացքում ներկայացնել լրացուցիչ մանրամասներ: Խնդրում եմ հանդիպման համար նշել Ձեզ հարմար օր և ժամ:

Կանխավ երախտապարտ եմ և հետագա համագործակցության հույս եմ հայտնում:

Լավագույն մաղթանքներով՝

Սեյրան Մարտիրոսյան,
«ԽորանԱրդ» ինտելեկտուալ կենտրոնի ՀԿ նախագահ,
Համահայկական 25-րդ ինտելեկտուալ փառատոնի համակարգող